Վ. Ի. ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՄԵՋ ՄԱՐՔՍՅԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին տարիներին մարքս-լենինյան քաղաքատնտեսության զարգացումը նշանավորվում է զգալի հաջողություններով։ Ստեղծագործական դիսկուսիաների միջոցով արագացել է այդ գիտության բուն պրոբլեմների տեսական ըմբռնման պրոցեսը, տեսական ձևակերպում են ստացել սոցիալիզմի քաղաքատնտեսության հիմնական հասկացողությունները՝ օրենքները և կատեգորիաները, հրատարակվել են մի ամբողջ շարք ուսումնական ձեռնարկներ և այլն։ Բայց սոցիալիզմի քաղաքատնտեսության դասընթացի ուսումնասիրման և շարադրման մեթոդոլոգիական հիմունքների մասին տնտեսագետների մոտ դեռևս միասնական կարծիք չկա։ Ս՝ եր Մամուլում, ինչպես հայտնի է, այդ հարցի շուրջը արտահայտվել են տարբեր կարծիքներ։

Հասկանալի է, տնտեսագետների կարծիքների մեջ չկան տարբերություններ ամեն մի գիտական հետազոտության համար կիրառվող դիալեկտիկական մատերիալիզմի մարքս-լենինյան մեթոդի շուրջը։ Սակայն դիալեկտիկական մատերիալիզմի կոնկրետ կիրառումը այս կամ այն առարկայի ուսումնասիրման ժամանակ կարող է ունենալ բազմաթիվ կոնկրետ ձևեր։ Դեռ ավելին, դիալեկտիկական մեթոդը ոչ միայն թույլատրում, այլ ենթադրում է մոտեցման բազմասլիսի կոնկրետ ձևեր ոչ միայն տարբեր առարկաների, այլև միևնույն առարկայի ուսումնասիրման համար։ Ուսումնասիրվող առարկայի երևույթների դիալեկտիկական բարդ փոխադարձ կապվածությունը կարող է գիտականորեն ճիշտ արտահայտվել նույն առարկային տարբեր կողմերից մոտենալու դեպքում։

Հետազոտման տրամաբանական մեթոդի կողմնակիցները փնտրում են պարզ հարաբերությունը կամ «բջիջը», որի վերլուծությունը, ապրանքի մարքսյան վերլուծության համակերպմամբ, կարող է ըստ առանձին տարրերի բացահայտել արտադրության սոցիալիստական եղանակի էությունը և հնարավորություն կտա, շարժվելով պարզից դեպի բարդը և վերացականից դեպի կոնկրետը, ընդգծել կարգի ամբողջ տրամաբանությունը։ Ընդ որում, նշված ուղղության կողմնակիցները տարբեր կարծիքի են այն հարցի շուրջը՝ թե ինչ հասկանալ «բջիջ» ասելով։ Եվ որպես այդպիսին առաջ են քաշվում սեփականությունը, պլանայնությունը, աշխատանքը, ընկերական փոխօգնությունը, ամբողջական արդյունքը, անմիջական հասարակական արդյունքը և այլն։

Սոցիալիզմի քաղաքատնտեսության ժամանակակից դասագրքերի մի մասի հեղինակները, ըստ էության, նյութը շարադրում են՝ օգտվելով պատմական մեթոդից. չնայած, ուղղակի այդ մասին չեն ասում։

Մեր կարծիքով, այդ բոլոր ուսումնական ձեռնարկներից ամենից ավելի հաջողված է Մոսկվայի պետական համալսարանի հեղինակների կոլեկտիվի (Ն. Ա. Ցագոլովի խմբագրությամբ) քաղաքատնտեսության դասընթացի երկ-

հատորյակը, որտեղ փորձ է արված նյութը շարադրել տրամաբանական վերլուծության տեսանկյունով, չնայած դրա արդյունքները վիճելի են։

Իհարկե, երկու մեթոդները միմյանցից անջատված չեն չինական պարիսպով, և եթե դրանք կիրառվում են դիալեկտիկական մատերիալիզմի ընդհանուր հիմքերից ելնելով, ապա, նախ՝ պատմական մեթոդը չի բացառում տրամաբանական սխեմաների կիրառումը, իսկ տրամաբանական մեթոդը պատմական հիմքերը և երկրորդ՝ թե՛ մեկի և թե՛ մյուսի կիրառումը հավասարաչափ օրինական է և պետք է հանդեցնի նույն արդյունքին։

Դրանում համոզվելու համար, բավական է դիմել Ֆ. Էնգելսի արտահայտություններին, որոնք բերված են նրա «Կարլ Մարքս, քաղաքատնտեսության քննադատության շուրջը»[1] աշխատության մեջ։ Կանգ առնելով Կ. Մարքսի ընտրած հետազոտության տրամաբանական մեթոդի վրա, Էնգելսը նշում է, որ վերջինը պայմանավորված է յուրահատուկ առարկայի՝ կապիտալի շարադրման հարմարություններով և ոչ թե պատմական մեթոդի անպիտանությամբ ընդհանրապես։ Վերջին մեթոդի դեպքում «...տնտեսական կատեգորիաները,— դրում է Էնգելսը, —ընդհանուր առմամբ և ամբողջությամբ, հանդես են եկել նույն հաջորդականությամբ, ինչ-որ տրամաբանական զարգացման մեջ։ «Ըստ Էնգելսի, այդ մեթոդի անհարմարությունը կայանում է նրանում, որ «պատմությունը հաճախ ընթանում է թռիչքներով ու զիգզագներով և եթե անհրաժեշտ լիներ հետևել նրան ամենուրեք, ապա անհրաժեշտ կլիներ ոչ միայն բարձրացնել չնչին կարևորություն ունեցող շատ նյութեր, այլև հաճախ ընդհատել մտքերի ընթացքը։ Այն դեպքում, երբ չի կարելի դրել քաղաքատնտեսության պատմությունը առանց բուրժուական հասարակության պատմության, իսկ դա աշխատանքը կդարձներ անվերջ, քանի որ բացակայում էր որևիցե նախապատրաստական աշխատանք»[2]։

Իրոք, հիշենք, որ բուրժուական արտադրական հարաբերությունների ծագման պատմությունը հաշվվում է շատ դարեր, իսկ այդ հարաբերությունների բջիջը ապրանքը ծնունդ է առել արդեն նախնադարյան-համայնական կարգերի քայքայման դարաշրջանում, որի պատմությունը դեռևս ուսումնասիրված չէ։ Կարելի՞ է արդյոք դրան համադրել սոցիալիստական արտադրական հարաբերությունները, որոնց ծագման ու զարգացման պատմությունը հաշվվում է ընդամենը կես դար։

Այս, մեր կարծիքով, դուրս է մնում այն տնտեսագետների տեսադաշտից, որոնք քննադատում են սոցիալիզմի քաղաքատնտեսության վերաբերյալ գոյություն ունեցող դասընթացները՝ դրանց պատմա-նկարագրական բնույթի պատճառով։ Այդ դասընթացների թերությունները ակնհայտ են։ Բանը նրանումն է, որ դասընթացների շարադրանքը մինչև վերջ չի հասցվում նշված մեթոդներից և ոչ մեկով, թեկուզ, մոտենում է պատմական մեթոդին։ Հետևողականորեն կիրառված պատմական մեթոդը կպահանջեր ոչ միայն մանրամասն շարադրել պատմության զարգացման ընթացքը, այլև տնտեսական կատեգորիաների և օրենքների հաջորդական դուրս բերումը պատմական նյութերի բազմակողմանի վերլուծության հիման վրա։

Միանգամայն հնարավոր է, իհարկե, հետազոտման տրամաբանական մեթոդը։ Այս դեպքում ևս ուսումնասիրությունը անհրաժեշտ է սկսել նրանից,

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч, т. 13, второе издание, стр. 497.

[2] Նույն տեղում։

«ինչից սկսում է պատմությունը», սակայն այստեղ տեսական հետևողականությունը պետք է «ուղղի» պատմական «անհետևողականությունը», այսինքն՝ վերլուծությունը պետք է բացառի պատմության պատահականությունները, պատմության զիգզագները և շեղումները օրենքներից, «որը տալիս է ինքը իրական պատմական պրոցեսը»։ Ընդ որում, պրոցեսը անպայման պետք է դիտվի իր հասունացած ձևով, քանի որ միայն հասունացած ձևերի տեսանկյունիր ելնելով հիմնավորված կերպով կարելի է դատել պատմության պատահականությունների մասին։ Այլ կերպ անխուսափելի են սխալները։ Այս կամ այն պատմական երևույթը հնարավոր է ընդունել որպես պատահական, այն դեպքում, երբ այն կարող է պայմանավորված լինել անհրաժեշտությամբ և ընդհակառակը։ Միթե այդպիսի սխալներով չէին բացատրվում տարբեր ժամանակներում հանդես եկած ապրանքային հարաբերությունների «սեղմման» կամ «սահմանափակման» ձգտումները։ Եվ միթե այդ սխալների հիմքում ընկած չէր մեր միանգամայն անբավարար պատկերացումը հասունացած կոմունիստական ոչ ապրանքային հարաբերությունների ձևերի, հետևաբար, ըստ էության արդեն կապիտալիստականից արմատապես տարբերվող ապրանքային հարաբերությունների մասին։

Այդ պատճառով, մեզ թվում է, որ խորապես սխալվում են այն տնտեսագետները, որոնք գտնում են, որ զարգացած կոմունիստական հարաբերությունների վերլուծությամբ մենք չպետք է զբաղվենք, քանի որ պատմական նյութեր չկան։ Իրոք, այդպիսի նյութեր չկան, բայց կան կոմունիզմի ուղիով պատմականորեն զարգացող հասարակություն և դիալեկտիկական մատերիալիզմի հզոր գիտական գործիք, որը վաղուց ապացուցել է իր ունակությունը՝ ծառայելու գիտական կանխատեսմանը, նույնիսկ այն ժամանակ, երբ դրա համար եղել են անչափ քիչ պատմական նյութեր։ Այդ պատճառով, կոմունիստական հասարակության քաղաքատնտեսությունը օրգանապես պետք է զուգակցի իր երկու փուլերի արտադրական հարաբերությունների հետազոտումը։ Համապատասխանաբար առարկան և մեթոդը իրենցից պետք է ներկայացնեն պատմական ու դիալեկտիկական մեթոդների սերտ զուգակցում։ Առաջին փուլի պատմականորեն կոնկրետ երևույթները, որոնք բևեռված են նրա տնտեսական կատեգորիաներում, պետք է ստուգվեն բարձր փուլի որոշակի տրամաբանական, հասունացած կատեգորիաներով և ընդհակառակը՝ վերջինների տրամաբանական ամբողջականությունը պետք է հաստատվի առաջինների զարգացման դիալեկտիկական ուղղությամբ։

Խոսելով քաղաքատնտեսության մեթոդոլոգիական հարցերի մասին, միշտ անհրաժեշտ է հիշել և պարզորեն սահմանազատել, թե ինչի մասին է խոսքը, առարկայի հետազոտման եղանակների՞, թե հետազոտման արդյունքների շարադրման եղանակների մասին։ Այդպես չի անում ոչ մի հեղինակ, չնայած այդ մոմենտը ոչ պակաս կարևոր է։ Եթե խոսքը շարադրման մասին է, ապա շարադրել կարելի է ցանկացած մեթոդով, իսկ եթե խոսքը ուսումնասիրման մասին է, ապա ընդունելի է միայն երկու մեթոդների զուգակցումը։

Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորի վերջաբանում գրել է. «Իհարկե, շարադրման եղանակը չի կարող ձևական կողմով չտարբերվել հետազոտման եղանակից։ Հետազոտությունը պետք է մանրամասնորեն ընդգրկի նյութը, վերլուծի նրա զարգացման տարբեր ձևերը, հետևի նրա ներքին կապին։ Միայն այ-

բանից հետո, երբ այս աշխատանքը ավարտված է, իրական շարժումը կարող է արտահայտվել հարկ եղած ձևով»[3]։

Շարադրման մեթոդոլոգիայի և հետազոտման օբյեկտի միջև եղած տարբերությունների անտեսումը օբյեկտիվորեն նշանակում է լռելյայն հավատ ընծայել այն բանին, որ առարկան արդեն ուսումնասիրված է և մնում է միայն շարադրել։ Այդպիսի կարծիքի վտանգավորությունը սոցիալիզմի քաղաքատնտեսության հետագա բաղմակողմանի հետազոտման պատասխանատվությունը մեր տնտեսագետներից հանելու փորձ կատարելու մեջ է։ Ընդ որում, երբեմն այդպիսի «պատասխանատվություն» դրվում է մարքսիզմ-լենինիզմի կլասիկների վրա։

«Կոմունիստական ֆորմացիայում մարդկանց փոխհարաբերությունների բաղմակողմանի հետազոտումը,— գրում է Ա. Մ. Ռումյանցևը,— հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն ամբողջականից գնում է դեպի մասնավորը»[4]։

Նույն բանին է հանգում նաև Մ. Սակովը. «Ամենից առաջ մեջ բերենք այն,— գրում է նա,— որ մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները ժամանակին տվել են սոցիալիզմի օրենքների ընդհանուր գիտական բնութագրումը՝ ընդհուպ մինչև առանձին օրենքների քննարկումը... Գիտական կոմունիզմը բաղմակողմանի պատմական ու տրամաբանական հիմնավորում է ստացել Կ. Մարքսի տնտեսական ուսմունքի մեջ... հենվելով այդ (մարքսյան—Վ. Ղ.) դրույթների վրա, սոցիալիզմի քաղաքատնտեսությունը կատարում է տեսական վերլուծություն՝ արտադրության սոցիալիստական եղանակի բուն էության բնորոշումից գնալով դեպի նրա առանձին կողմերը, օրենքները և երևույթները»։

Ակնհայտ է սրա տրամաբանությունը. քանի որ կլասիկները տվել են գիտական կոմունիզմի բաղմակողմանի հիմնավորումը, այժմ ոչինչ չի մնում անել, բացի նրա առանձին կողմերը ուսումնասիրելուց։ Հետևանքը լինում է այն մեթոդիկան, որը կարող է լինել միայն շարադրման մեթոդիկա։ «Այստեղից էլ տեսական վերլուծության մեջ անհրաժեշտ է ելնել ոչ թե մասնակի և առանձին կողմերից, այլ ամբողջականից, ընդհանուրից, սոցիալիստական արտադրության էական բնույթից, նրա զարգացման գլխավոր ուղղություններից և տենդենցներից.... Այդ հնարավորություն է տալիս տնտեսական էությունը հայտնաբերել տեսական վերլուծության ոչ թե վերջում, այլ սկզբում»[5]։

Այդ կարծիքը քողարկում է խորը մեթոդոլոգիական սխալ. ըստ էության, նա հետազոտությունից «աղատում» է, քանի որ «էությունը պարզել հետազոտության սկզբում» հնարավոր չէ, իսկ եթե նախօրոք էությունը հայտնաբերված է, ապա վերլուծությունը կորցնում է իմաստը, այն «էությունը» աղատում է լիովին բացահայտելու անհրաժեշտությունից, այդ բոլորը դցելով կլասիկների ուսերի վրա՝ իրեն թողնելով միայն «առանձին կողմերի տեսական վերլուծության կառուցման» պարտականությունը։ Մինչդեռ մարքսիզմ-լենինիզմի կլասիկները տվել են սոցիալիզմի և կոմունիզմի էության միայն ընդհանուր բնորոշումը, պատմական անհրաժեշտության հիմնավորումը,

---

[3] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 21.

[4] А. М. Румянцев, О категориях и законах политической экономии коммунистической формации, 1965, стр. 5.

[5] М. Саков, Метод политической экономии социализма, журнал «Политическое самообразование», № 9, 1965, стр. 53—55.

ղրանց սկզբունքային տարբերությունները կապիտալիզմից։ Նրանք երբեք չեն ձգտել բացահայտել երևույթների լրիվ բովանդակությունը սոցիալիզմի և կոմունիզմի ժամանակ, իսկ այդ էությունը, ինչպես արդեն գիտենք սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման փորձից, չափազանց բազմակողմանի և բարդ է։ Նրանք երբեք չեն ասել, որ ստեղծել են կոմունիզմի քաղաքատնտեսություն։

Երևույթների բացահայտման աստիճանը կարող է չափազանց տարբեր լինել։ Օրինակ, կոմունիզմի ամենաընդհանուր էությունը՝ շահագործման բացակայությունն է և, եթե սոցիալիզմի քաղաքատնտեսության հետազոտմանը մոտենանք այդ տեսակետից, ապա այդ էությունը արդեն տրված է ուտոպիստ-սոցիալիստների աշխատություններում։ Այնուհետև, նշված հոդվածի հեղինակը գտնում է, որ կոմունիզմի քաղաքատնտեսության ուսումնասիրման նկատմամբ այլ մոտեցումը կնշանակեր, որ «...մարքսիստական գիտական կոմունիզմը անհրաժեշտ է դիտել որպես սկզբնական աշխատանքային հիպոթեզ, որը անհրաժեշտ է այժմ ուղղակի հետաձգել և սկսել արտադրության սոցիալիստական եղանակի տեսական վերլուծությունը նրա առանձին կողմերից, ենթադրելով, որ գիտությանը դեռևս ոչինչ ստույգ հայտնի չէ նրա էության և կոմունիզմից նրա արմատական տարբերությունների մասին, որին փոխարինելու է գալիս նա»[6], և այդ կարծես թե կնշանակեր վերջինիս գիտակցական կառուցման անհրաժեշտության անտեսում։

Այստեղ, մեր կարծիքով, ամեն ինչ շփոթված է։ Երբ Մարքսը կապիտալի վերլուծությունը սկսեց ապրանքի ուսումնասիրությունից, մի՞թե ստույգ ոչինչ հայտնի չէր արտադրության կապիտալիստական եղանակի, նրա ընդհանուր շահագործողական բնույթի մասին։ Չէ՞ որ դեռ մինչ «Կապիտալի» հանդես գալը Մարքսի և Էնգելսի հանրահայտ աշխատություններում կապիտալիզմի շահագործողական ընդհանուր էությունը ցուցադրված էր, թեև ոչ բազմակողմանի և լիակատար գծով։ Եվ այստեղ բանը կոմունիզմի «հիմնավորվածության» մեջ չէ։ Այն վաղուց հանճարեղ կերպով հիմնավորված է, բայց միայն պատմական անխուսափելիության իմաստով՝ իր ամենաընդհանուր գծերով։

Եվ սոցիալիզմի ոչ մի «պատմական առանձնահատկություն» չի հակասի նրա էության, կատեգորիաների և օրինաչափությունների բազմակողմանի և սպառիչ բացահայտման անհրաժեշտությանը՝ տրամաբանական վերլուծության օգնությամբ։ Ընդհակառակը, միայն այդպիսի վերլուծությունն է ի վիճակի մինչև վերջը բացատրել նրա բոլոր առանձնահատկությունները։

Ինչպես հայտնի է, «Կապիտալի» շարադրման ժամանակ Մարքսը հավասարապես օգտվել է շարադրման թե՛ ինդուկտիվ և թե՛ դեդուկտիվ մեթոդներից։ Դեռ ավելին, եթե առարկայի նկարագրությունը այդ մեթոդներից մեկի օգնությամբ կարող է իմաստ ունենալ, ապա վերջինի հետազոտումը բոլորովին անիմաստ է նրանցից որևէ մեկի օգնությամբ։ Միայն դեդուկտիվ մեթոդից օգտվելիս չի կարելի տալ առարկայի քիչ թե շատ լրիվ պատկերը, եթե առարկան նախօրոք լրիվ ուսումնասիրված չէ իր բոլոր մանրամասնություններով։ Այսպես, պատկերավոր արտահայտվելով, իհարկե, կարելի է հեռվից դիտել որևէ ցեկենդանի էակ ամբողջությամբ վերցրած և գաղափար կազմել նրա մասսայի, շարժվելու եղանակների, էներգիայի, հասակի մասին և այլն. բայց ոչինչ չի կարելի ասել արյան խմբի և կառուցվածքի, ներքին օրգանների համաչա-

6 Նույն տեղում։

փության, ներվային համակարգի կառուցվածքի, մտավոր ունակությունների մասին և այլն, և համենայն դեպս ոչինչ չի կարելի ասել այդ էակի էթիոլոգիայի և հետագա էվոլյուցիայի մասին։ Դրա համար անհրաժեշտ է ոչ միայն և ոչ այնքան կենդանու արտաքին և ընդհանուր տվյալների քրտնաջան վերլուծություն, որոնք կարող են լինել և խաբուսիկ, այլև առանձին օրգանների և օրգանիզմի մասերի, հետևելով նրանց էվոլյուցիային և աստիճանաբար վերստեղծելով ամբողջի ընդհանուր պատկերը՝ ստացված տվյալների սինթեզման շնորհիվ։

Հասկանալի է, որ այդ պատկերավոր համեմատությունը չի հետապնդում բնական գիտություններին յուրահատուկ մեթոդները և միջոցները նրանցից արմատականորեն տարբերվող հասարակական գիտությունների յուրահատուկ մեթոդների հետ նույնացնելու նպատակով։ Այստեղ խոսքը ամենաընդհանուրի մասին է, որը յուրահատուկ է ամեն մի բարդ ու դինամիկական ամբողջի հետազոտմանը։ Դա հենց այն է, որը Մարքսը կատարել է կապիտալիզմի հասարակական-տնտեսական օրգանիզմի հետազոտման նկատմամբ և որը անհրաժեշտ է անել ցանկացած ֆորմացիայի հետազոտման ժամանակ։ Այստեղ հարցը բոլորովին էլ այն չէ, թե հետազոտությունը սկսել ապրանքից, թե՞ սեփականությունից, պլանաչափ զարգացման օրենքից, թե՞ տնտեսական զարգացման հիմնական օրենքից, այլ այն է, որպեսզի ամբողջի բոլոր մասերի հետազոտությունը հասցնել այնպիսի վիճակի, երբ այդ ամբողջի տեսքը կքողարկի նրա առանձին մասերի ինքնուրույնությունը, որոնցից և միայն այն կարող է բաղկացած լինել, իսկ առանձին մասերի մեջ, իր հերթին, չքողարկվեր ամբողջը, որի կազմում միայն իմաստ ունի այդ առանձին մասերի գոյությունը։

Չի կարելի մոռանալ, որ օբյեկտիվորեն հետազոտման դեդուկտիվ մեթոդի չափազանցումն է ընկած հասարակական գիտությունների դոգմատիկական կոնցեպցիաների հիմքում։ Հենց դրանում էլ պետք է փնտրել տեսության ու պրակտիկայի ասպարեզում գոյություն ունեցող «հասարակականի» և «ընդհանուրի» չափազանցումը «անձնականի» և «կոնկրետի» նկատմամբ՝ բոլորին հայտնի իր վնասակար հետևանքներով հանդերձ։ Դրան հակառակ, մյուս մեթոդիկան, որը վերլուծության հիմք է ընդունում միայն մասնավորը և նախընտրում է հիմնաղուրկ ենթադրություններ կատարել, հանդիսանում է ամեն տեսակի ռևիզիոնիզմի մեթոդոլոգիական հիմքը։ Ահա թե ինչու միմյանցից անջատ վերցրած հետազոտման նշված երկու մեթոդները, օբյեկտիվորեն խորթ են մարքսիզմ-լենինիզմին։

Սոցիալիզմի քաղաքատնտեսության դասընթացների մեծ մասում շարադրանքը կատարված է պատմանկարագրական ընդհանուր պլանով՝ առանց լուրջ տեսական վերլուծության փորձ կատարելու։ Դրա ռեակցիան եղավ այն, որ շատ տնտեսագետներ փորձեցին մեխանիկորեն ընդօրինակել «Կապիտալի» շարադրման տրամաբանությունը և «սոցիալիզմի համար գտնել նույնպիսի սկզբնական և ունիվերսալ արտադրական հարաբերություն»[7] կամ բջիջ, որը կարող է արտահայտել հասարակարգի էական նախադրյալները։

Տնտեսագետների զգալի մասը համամիտ է, որ այդպիսի վերլուծության հիմքում դրվի սեփականությունը՝ որպես տնտեսական կատեգորիա, որպես ինչ-որ հիմնական արտադրական հարաբերություն։ Այդ հայացքի սխալ լինե-

[7] «Курс политической экономии», 1963, т. I, стр. XXI.

լը ակնհայտ է։ Արտադրական հարաբերությունները առարկայական, նյութական հարաբերություններ են, այսինքն՝ մարդիկ հարաբերությունների մեջ են մտնում առարկաների արտադրության կապակցությամբ, իսկ վերջինները չեն կարող սեփականություն չլինել։ Հետևաբար, արտադրական հարաբերությունները, ըստ էության, սեփականության հարաբերություններ են։ Իր աշխատություններում Մարքսը ուղղակի ցուցումներ է տվել այդ մասին, որոնք ճշտորեն բերվել են մեր մամուլում և հարկ չկա նորից դրանք կրկնելու[8]։ Սեփականությունը, տնտեսականորեն հասկանալով, կարող է նույնացվել միայն ամբողջական արտադրական հարաբերությունների, այսինքն՝ հետադոտման առարկայի հետ ամբողջությամբ վերցրած։ Իսկ եթե սկսենք սեփականության վերլուծությունից, այն դիտելով որպես առանձին կատեգորիա, ապա այդ կատեգորիան գործնականում անխուսափելիորեն կներկայանա որպես իրավաբանական, որքան էլ հեղինակները ցանկանան այն ներկայացնել որպես տնտեսական կատեգորիա։ Ըստ էության, բանն այդպես է սոցիալիզմի քաղաքատնտեսության դասագրքերի մեծ մասում, որտեղ սոցիալիստական սեփականության ծագումը ներկայացված է արտադրության հիմնական միջոցների ազգայնացման իրավաբանական ակտերի ձևով։ Այդ տեսակետից տարբերվում է Մոսկվայի համալսարանի հեղինակային կոլեկտիվի կազմած քաղաքատնտեսության դասընթացը, որտեղ սեփականության հարաբերությունները չեն առանձնացվում արտադրական հարաբերությունների ամբողջությունից։ Սակայն, ինչպես հայտնի է, այս հեղինակները փորձում են, որպես հատուկ տնտեսական կատեգորիա և պարզագույն համընդհանուր հարաբերություն, ներկայացնել պլանաչափությունը՝ միաժամանակ վերջինս ներկայացնելով որպես սոցիալիստական (կոմունիստական) հասարակության զարգացման յուրահատուկ օրենք։ Մեր մամուլում արդարացիորեն ապացուցվել է, որ հասկացողությունների այդպիսի համատեղումը ճիշտ չէ։

Արտադրական հարաբերությունները նյութական հարաբերություններ են, նրանք ծագում են արդյունքի, այսինքն ամենից առաջ նյութապես շոշափվող իրերի, արտադրության կապակցությամբ, քանի որ, եթե համաձայնվեն արտադրության առաջնության հետ, ապա ամեն մի արտադրություն ամենից առաջ իրերի արտադրություն է։ Հետևաբար, այդ իրերի, նրանց հասարակական բնույթի և ձևերի մեջ էլ առաջին հերթին պետք է փնտրել արտադրական հարաբերությունների «մասնիկները»։ Այդ պատճառով, նույնիսկ առանձին կատեգորիաների ցանկացած վերլուծությունը պետք է լինի արտադրական հարաբերությունների վերլուծություն, որոնք բացահայտվում են իրերի հասարակական ձևերի մեջ։ Ընդ որում, ամենևին էլ պարտադիր չէ, որ այդպիսի վերլուծությանը համապատասխաներ իրերի ֆետիշացումը հասարակության մեջ։ Սոցիալիստական հասարակարգում գոյություն չունի ապրանքային ֆետիշիզմ, սակայն այդ չի նշանակում, թե իրերը չեն ընդունում սոցիալիզմին յուրահատուկ հասարակական ձև։ Պլանաչափությունը տնտեսական կատեգորիա չէ։ Ինչպես հիմնական տնտեսական օրենքը, այն հանդիսանում է սոցիալիզմի բոլոր տնտեսական կատեգորիաների շարժման օրենքը։ Նա ինքը, հետևաբար, հանդիսանում է սոցիալիզմի արտադրական հարաբերությունների ֆունկցիան, նրանց անհրաժեշտ բնութագրերից մեկը, որը արտաքուստ

8 Բավական կլիներ դիմել սկզբնաղբյուրներին։

տանգես է գալիս որպես գիտակցության ֆունկցիա և նախահիմքում կարող է ունենալ իրերի մեջ գրված հարաբերությունները միայն։ Հենց այդ պատճառով էլ վերջինների վերլուծության ժամանակ միայն կարող է բացահայտվել և պարզաբանվել ինքը՝ պլանաչափությունը։ Տրամաբանության հակառակ ընթացքը կարող է միայն հեռացնել ճշմարտությունից։

Մեր առջև խնդիր չէինք դրել քննադատել առաջարկվող բազմաթիվ «բջիջներից» և «պարզագույն համընդհանուր հարաբերություններից» յուրաքանչյուրը, որոնց միջև, ի դեպ, համարյա, էական տարբերություններ չկան։ Մենք համամիտ ենք այն տնտեսագետների կարծիքին, որոնք գտնում են, որ «Կապիտալի» տրամաբանության մեխանիկական ընդունումը կասկածելի է։ Դեռ պահանջվում է ապացուցել, որ սոցիալիզմի ժամանակ գոյություն ունի այնպիսի պարզագույն հարաբերություն, ինչպես ապրանքը կապիտալիզմի ժամանակ, որն իր մեջ միացնում է ավելի բարդ հարաբերությունների հիմնական տարրերը։ Ավելի շուտ, այդպիսի «բջիջ» գոյություն չունի, բանի որ նա «պարտավոր» չէ գոյություն ունենալ յուրաքանչյուր ֆորմացիայում։ Բջիջ գտնելու գաղափարի մեջ կա «ռացիոնալ հատիկ»։ Բայց այդ չի նշանակում, թե այդ բջիջը պետք է համարել որպես ամբողջ դասընթացի շարադրման համընդհանուր նախահիմք։ Այդ բջիջները անհրաժեշտ են հետազոտման և հետո սոցիալիզմի քաղաքատնտեսության առանձին կատեգորիաների հասկացողությունների շարադրման համար։ Այլ կերպ ասած, որպեսզի վերացուցչանից մասնավորի, պարզից բարդի տրամաբանական վերլուծության մարքսիստական մեթոդը լիովին օգտագործվի, առաջին հերթին սոցիալիզմի քաղաքատնտեսության առանձին կատեգորիաների և հասկացությունների նկատմամբ կիրառելու ժամանակ՝ նախապես որևէ կատեգորիայի մեջ արտադրական հարաբերությունների ամբողջ համակարգի ընդգրկման տեսակետից վերլուծության համընդհանրության հավակնություն չունենալով՝ պետք է առաջին հերթին ունենալ անհրաժեշտ կուտակված վերլուծական (այլ ոչ թե միայն փաստական) նյութեր։ Միայն այդպիսի վերլուծությունը կարող է համոզել (եթե դա օբյեկտիվորեն հնարավոր է), որ այս կամ այն պարզագույն հարաբերությունը հանդիսանում է համընդհանուր։

Այս միտքը պարզաբանելու համար, վերցնենք ապրանքային արտադրությունը սոցիալիզմի ժամանակ։ Մինչև այժմ գոյություն չունի սոցիալիզմի ժամանակի ապրանքի բավարար վերլուծություն։ Ապրանքային արտադրության հարցերին նվիրված սոցիալիզմի քաղաքատնտեսության դասագրքերում և առանձին աշխատություններում հենց սկզբից ուսումնասիրվում են բարդ, կոնկրետ ապրանքային հարաբերությունները, ընդ որում չարաշահելով պատմական փաստերի ծագման և այդ հարաբերությունների զարգացման նկարագրությամբ։ Եվ պատահական չէ, որ այդ հարաբերությունների էությունը մնում է չբացահայտված, քանի որ չի կարելի ապրանքային արտադրության էություն համարել նրա անհրաժեշտությունը սոցիալիզմի ժամանակ։ Երբ գործը վերաբերվում է պարզ ապրանքային հարաբերություններին, որոնք պարունակվում են հենց ապրանքի մեջ, ապա այստեղ ապրանքի մարքսյան վերլուծությունը մեխանիկորեն, ըստ էության, անփոփոխ ձևով, տարածվում է սոցիալիստական արտադրական հարաբերությունների վրա։ Ընդ որում, միայն ապրանքի «անտագոնիստական» հակասությունները փոխարինվում են «ոչ անտագոնիստականով»։ Եվ դա համարվում է ոչ միայն նորմալ, այլև բարձրացվում է սկզբունքի

աստիճանի։ Այսպես, օրինակ, մի խումբ հեղինակներ քննադատելով սոցիալիզմի պայմաններում ապրանքա-դրամական հարաբերությունները էության կողմից դիտելու մի շարք տնտեսագետների փորձերը, գրում են. «Մարքսիստական-լենինյան գիտությունը վաղուց բացահայտել է մարդկանց ապրանքա-դրամական ձևի կապերի էությունը և որոշել նրա մահացման պայմանները»[9]։

Իրոք որ, այդ էությունը վաղուց և փայլուն կերպով բացահայտել են կլասիկները, բացահայտվել են նաև նրա մահացման ընդհանուր պայմանները։ Բայց այն բացահայտվել է լրիվ հակառակ արտադրական հարաբերությունների պայմաններում։ Որոշակի պատմական պայմանների առկայության հետևանքով մարքսիզմի կլասիկները չտեսան և չէին կարող տեսնել ապրանքի գոյության օբյեկտիվ անհրաժեշտությունը սոցիալիզմի ժամանակ։ Հետևաբար, նրանք չէին կարող ապրանքի մեջ բացահայտել այն հարաբերությունները, որոնք այն ժամանակ գոյություն չունեին։ Երևույթների էությունը կարող է լինել բազմակողմանի։ Միևնույն երևույթները, որոնք հանդես են գալիս միևնույն ձևերի մակերեսի վրա, փոփոխվող պատմական պայմաններում կարող են փոխել իրենց էությունը կամ հնի հետ միասին ցույց տալ նոր էական կողմեր, որոնք մինչև այդ հանդես չեն եկել և հետևաբար գաղտնի են մնացել նույնիսկ հանճարեղ մտածողների համար։ Այդ տարրական մարքսիստական դիալեկտիկան է, որը չգիտես ինչու, տվյալ դեպքում, անտեսվում է։ Իսկ այդպիսի անտեսումը անխուսափելիորեն հանգեցնում է տրամաբանական հակասությունների։ Այսպես, օրինակ, նշված հեղինակները ընկնելով աղաղակող հակասության մեջ, գրում են. «կարիք չկա ապացուցելու, որ աշխատանքի արդյունքները ապրանքների ձև են ընդունում շատ թե քիչ միմյանցից անջատ մասնավոր արտադրողների հասարակությունում», ընդ որում, մեջ բերելով Մարքսի հայտնի խոսքերն այն մասին, որ «միայն ինքնուրույն, մեկը մյուսից անկախ մասնավոր աշխատանքի արդյունքները մեկը մյուսի դեմ հանդես են գալիս որպես ապրանքներ»։

Հարց է ծագում, կարելի՞ է արդյոք, այդպիսի նախադրյալներով սկսել ապրանքային հարաբերությունների վերլուծությունը սոցիալիզմի ժամանակ։ Եվ արդյոք հարկ կա՞ ապացուցելու, որ աշխատանքի արդյունքները հենց սոցիալիզմի ժամանակ և շատ թե քիչ միմյանցից անջատ մասնավոր արտադրողների բացակայության պայմաններում են ընդունում ապրանքների ձև։ Սոցիալիստական կարգը գովերգման կարիք չի զգում. այդ կարգը զարգանում է մարդկային պատմության օբյեկտիվ, անխուսափելի օրենքներին համապատասխան, անկախ այն բանից՝ այդ դո՞ւր է գալիս ոմանց, թե ոչ։ Կոմունիզմի առաջին փուլին հատուկ են ապրանքա-դրամական հարաբերությունները։ Սոցիալիզմի ժամանակ դրանց անհրաժեշտությունը դեկլարացիայի չի ենթարկվում և չի «որոնվում» որևէ մեկի կողմից, ինչպես պնդում են նույն հեղինակները[10], այլ ռեալ գոյություն ունի և թափանցում է սոցիալիզմի տնտեսական օրգանիզմի բոլոր ոլորտները։

---

9 В. Андреев, А. Балалина, А. Глезова, М. Морковин, И. Подшивалов, Принципы построения курса политической экономии социализма, журнал «Экономические науки», т. 4, 1965, стр. 46.

10 Նույն տեղում, էջ 47։

Եվ այն, որ այդ հեղինակները առաջարկում են «անմիջական հասարակական արդյունքը»[11] ընդունել որպես բջիջ, հենց այդ պետք է նրանց համոզեր այն բանում, որ արդյունքի անմիջական հասարակական բնույթը սոցիալիզմի ժամանակ և միայն սոցիալիզմի ժամանակ, հավանաբար, կարող է գոյակցել նրա ապրանքային ձևի հետ, քանի որ այդ արդյունքը հիմնականում փաստացի գոյություն ունի այդ ձևով։ Եվ ահա այդ, առաջին-հայացքից անբացատրելի թվացող, երևույթի հետազոտման մեջ անհրաժեշտ է կիրառել բջիջի «տեսությունը», այսինքն՝ հետազոտությունը սկսել սոցիալիզմի պարզ ապրանքային հարաբերությունների բացահայտումից, հանուն ապրանքի մարքսյան վերլուծության զարգացման և հենվելով վերջինիս վրա, դոգմայի չվերածել այն։ Այդ շափազանց կարևոր է, որովհետև կյանքը ցույց է տալիս, որ որքան մենք շատ ենք անտեսում սոցիալիզմին ներքուստ յուրահատուկ արժեքի օրենքը, այնքան ավելի շատ սխալներ ենք կատարում ոչ միայն տեսության ասպարեզում, այլև, որ ավելի կարևոր է, կոմունիստական շինարարության պրակտիկայում։ Դրանում համոզվելու համար բավական է ուսումնասիրել ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1965 թ.) պլենումի որոշումները։ Սոցիալիզմի պայմաններում արժեքի օրենքի գործողության ճանաչումը մարքսիստ-տնտեսագետների պարտքն է։

Ապրանքային արտադրության օրինակով մենք միայն փորձեցինք բացատրել մարքսիստական տրամաբանական վերլուծության մեթոդի կիրառման հնարավորությունը և անհրաժեշտությունը, առաջին հերթին առանձին տնտեսական կատեգորիաների և հասկացողությունների հետազոտման համար։ Այդ անհրաժեշտությունը գոյություն ունի նաև սոցիալիզմի քաղաքատնտեսության մի շարք ուրիշ տնտեսական կատեգորիաների համար։ Միայն այդպիսի բազմակողմանի հետազոտական աշխատանքի հիման վրա կարելի է վերջնականապես մշակել սոցիալիզմի քաղաքատնտեսության ամբողջ դասընթացի շարադրման մեթոդիկան։

---

11 Նույն տեղում, էջ 43—44։